



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/38430-2025

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-1158-30.09.2025-SՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխության վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

Առաջարկում ենք հետևյալը.

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 184-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկ վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված)՝ նույն բաժնով սահմանված ավտոտրանսպորտային միջոցներով (բացառությամբ «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպված) Հայաստանի Հանրապետություն (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից) մուտք գործողները:

Միաժամանակ, առկա են իրավիճակներ, երբ վերոնշյալ դրույթով սահմանված անձինք ՀՀ տարածք մուտք գործելուց հետո լքում են ՀՀ տարածքը՝ առանց սահմանային անցման կետում տեղակայված մաքսային հսկողության գոտին լքելու (ըստ էության առանց ճանապարհներից օգտվելու), ինչի արդյունքում նրանց որպես ճանապարհային հարկ վճարողներ դիտարկելը և ճանապարհային հարկի վճարման պարտավորություն առաջադրելը խնդրահարույց է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 184-րդ հոդվածի 2-րդ մասում «մուտք գործողները» բառերից հետո լրացնել հետևյալ բառերը. «՝ բացառությամբ այն անձանց, որոնք Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) տրանսպորտային միջոցներով

Հայաստանի Հանրապետության սահմանով մուտք գործելուց հետո վերադառնում են՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ժամանակահատվածում չլքելով սահմանային անցման կետում տեղակայված մաքսային հսկողության գոտու տարածքը»:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում ենք վերանայել նաև հողվածների համարակալումը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-1158¹-30.09.2025-SՀ-011/1) վերաբերյալ առաջարկներ առկա չեն:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ